

ԿՐՏԱԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԵՐ**

2-րդ դասարան

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ  **EDIT PRINT**

Երևան 2010

Մայրենի լեզու

Լուս Ս. Մուրադյանի

Քաղցրորդ երգ է,
Մայրական ձեռք է
Ու հզոր գեներ է
Մայրենի լեզուն:

Թորով քաղիկ է,
Լուսն գալիք է,
Շտալլ քարիք է
Մայրենի լեզուն:

Կապույտ Սևանն է,
Նոր Երևանն է,
Ողջ Հայաստանն է
Մայրենի լեզուն:

Աղավնիները

Հատ 1. Սարգսյանի



Տղան, հացի կտորը ձեռքին, վազեց դեպի աղավնիները, փշրեց և արագ վերադարձավ տատի մոտ: Աղավնիները ուրախ դունդունացին*:

- Տատիկ, լավն են, չէ՛, խոսեց նա:

- Լավն են, գեղեցիկ են, Արտաշեն ջան,- համաձայնեց տատը:

- Իսկ այդ ճնձղուկները որտեղի՞ց եկան,- բարկացավ Արտաշեսը: Ճնձղուկները մի քիչ անհամարձակ, բայց ծարավորեն հավաքում էին աղավնիների

համար թափած հացի փշուրները:

- Քը՛շշ,- կանչեց տղան՝ մոտենալով ճնձղուկներին:

Նրանք վայրկենապես թռան մոտիկ ծառերին: Աղավնիները շփոթված նայեցին տղային:

- Ոչինչ, թող ճնձղուկներն էլ ուտեն,- խոսեց տատը,- նրանք էլ են քաղցած:

- Չէ՛, խոսվեց Արտաշեսը,- ես նրանց համար չեմ փշրել:

Տատը լռեց՝ չիմանալով ինչպես լեզու գտնել* չարածի թոռնիկի հետ:

- Ախր, տեն է, տատի՛,- խոսեց նա,- այնպես էլ համարձակ են ուտում, կարծես հենց իրենց են հրավիրել ծաշկերույթի: Իսկ աղավնիները...

Արտաշեսը վրդովված նայեց աղավնիների կողմը:

- Այ տատ, նայի՛ր, երեք ճնձղուկի չափ են ու կարծես վախենում են դրանցից: Ի՛նչ է, չե՛ն կարող կտցահարել* ու հեռու փախցնել:

Տատիկը ժպտաց.

- Ախր, Արտաշեն ջան, երևի նրանք էլ են հասկանում, որ ճնձղուկները քաղցած են... Համ էլ, բա մարդ իրենից փոքրին կհալածի՛,- փորձեց թոռնիկին մեղմացնել տատը...

Ճնձղուկները թռել էին ծառերին: Երևի աղավնիների համար փշրած հացը

վերջացել էր: Աղավնիները տոտիկ-տոտիկ քայլում էին: Արտաշեսը տատի ձեռքից վերցրեց հացի վերջին կտորը և մոտեցավ, որ...



Դունդունայ - աղտվեմ' դու-դու ձայն հանել:
Լեզու գտնել - իրար հասկանալ, համբերաշխ լինել:
Կտցանալ - կտուցով խփել' գարկել, հարվածել:

Ինքնուրույն աշխատանք

1. Ո՞ր թռչունի մասին են նախադասությունները, գծով միացրո՛ւ:

«Նում օգտագործել են որպես կապի միջոց՝ նամակատար:»
 Դունդունում է:
 Կտցանում է:
 Լեզու գտնում է:
 Կտուցով խփում է:
 Կտուցով խփում է:
 Կտուցով խփում է:

2. Բնագրի մտքերը նշիր V-ով:

- Աղավնիները ուրախացան՝ հացի փշրանքները տեսնելով:
- Արտաշեսին դուր չեկան աղավնիները:
- Ճնճողուկները ծարավորեն հավաքում էին հացի փշրուկները:
- Աղավնիները փոքր են ճնճողուկներից:
- Աղավնիները քայլում են տոտիկ-տոտիկ:

Խմբային աշխատանք

1. Տատիկը լեզու գտնում էր թռչունիկի հետ:
2. Դուք ի՞նչ եք կարծում, մարդ իրենից փոքրին կհավածի՞...
3. «Արտաշեսը տատի ձեռքից վերցրեց հացի վերջին կտորը և մոտեցավ, որ...»: Ի՞նչ եղավ հետո: Ավարտե՛ք պատմությունը:

Բովանդակություն

Մայրենի լեզու (ըստ Ս. Մուրադյանի).....	4
Աղավնիները (ըստ Լ. Մարգարյանի).....	5
Տոհմաձառ, Գ. Գևորգյան.....	7
Փոստատար աղավնին (ըստ Ջ. Պեդրոսյանի).....	9
Ազնվություն (ըստ Գ. Մովսիսյանի).....	12
Դավիթն ինչու՞ լաց եղավ (ըստ Վ. Մուխամբեկյանի).....	15
Խնդիրը լուծեց (ըստ Հ. Ջորոյանի).....	17
Ճույլի երազը (ըստ Էդ. Միրզոյանի).....	20
Թափփված Մուրենը (ըստ Մ. Արագոս).....	22
Աշխատում ենք (ըստ Վ. Վարդանյանի).....	25
Լուսիկը (ըստ Ազ. Արարաջյանի).....	27
Օգնե՞ց մայրիկին (ըստ Մերսուքեի).....	30
Աշխատանքում (ըստ Ն. Միքայելյանի).....	33
Այսպիսին ու սոխակը (ուզբեկական գրույց).....	35
Երկու քոթոթ (ըստ Ջ. Աղլայի).....	38
Փուշիկը (ըստ Գ. Մակունցի).....	40
Օճառի պղպջակներ (ըստ Ս. Մյունրոմի).....	43
Արդյոք հավիկը հիմա՞ր է (ըստ Ա. Վարդանյանի).....	47
Տերեր (ըստ Գ. Մանուկյանի).....	50
Փորրիկ սարյակը (ըստ Կ. Տոնոյանի).....	53
Գարուն (ըստ Հ. Աբրահամյանի).....	57
Մառն ու ծիծաղը (ըստ Էդ. Ավագյանի).....	61
Նապաստակները (ըստ Ար. Խենկոյանի).....	63
Հերիաթ տղայի մասին (ըստ Է. Խուչյանի).....	65
Նրանք մեզ համար, մենք էլ՝ ուրիշի (իտալական ժողովրդական հեքիաթ).....	67
Անհաղթ արջորդ (ըստ Հովհ. Թումանյանի).....	70
Կանաչ գորտի հեքիաթը (ըստ Վ. Գրիգորյանի).....	73
Ո՞րն է լավ (անգլիական հեքիաթ).....	77
Ի՞նչ մտածեց ռզմին (ըստ Կ.Լ. Օսկեալի).....	80